ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

45. ՀԱՑԻ ԳՅՈՒՂ,—ԲՈՒ ԵՂՑԻ

Այս անունով է կոչվում Հացի գյուղից դեպի արեելք դանվող հուշարձանների մի մեծ խումբ, որը սփռված է լայնանիստ ու բարձր բլրի ստորոտից սկսած մինչև դագաթը։ Կանգուն և կիսավեր հուշարձանների վրա պահպանված արձանագրությունները հիմնականում վերաբերում են XII—XIII դարերին, բայց մի քանի ճարտարապետական բեկորները և ժողովրդի մեջ պահպանված ավանդությունները հաստատում են այդ վայրի շատ ավելի հին, մինչև հեթանոսական ժամանակները հասնող մշակույթի դոյությունը։

Հնագույն բեկորներից առանձնապես նշել ենք մի քանի քառակող կոթողների մասեր, որոնք վերաբերում են V—VII դարերին. դրանք գտնվում են բլրի դաղտթի եկեղեցիների շրջապատում, ցրված վիճակում և ծածկված են թփերով ու մացառներով։ Մենք այդտեղ տեսանք մի կոթողի բուն, երկու խոյակ և երեք խարիսխներ՝ այդ դարաշրջանին բնորոշ երկրաչափական և բուսական զարդաքանդակներով և հավասարաթև խաչերով։

Կանգուն և կիսավեր հուշարձանները հետևյալներն են.

Ա. Երկու իրար կից եկեղեցիներ, փոքր, որոնց մուտքերը բացվում են մի ընդհանուր գավթի մեջ. գավթի ծածկն ավելի բարձր է, քան եկեղեցիներինը և նստած է որմնամուլթերով խաչավորված կամարների վրա։ Բոլոր երեք շենքերն էլ կառուցված են անտաշ քարերով. սրբատաշ և գեղեցկորեն զարդարված են հարավային եկեղեցու և գավթի մուտքերը։ Այդ եկեղեցու մուտքը զարդարված է շախմատաձև ուռուցիկ քարերով, ե կենտրոնում նման ձևի խաչ է.

Բ. Եկեղեցի-մատուռ. գտնվում է նախորդների մոտ, արևմտյան կողմում. շինված է անտաշ քարերով. մուտքը սրբատաշ է և նախորդի նման ուռուցիկ, ձևավորված է ռոմբաձև զարդերով, ճակատին ուռուցիկ խաչ։ Մուտքի շրջանակներից դուրս, երկու կողմերից առանձին քարերի վրա հուշկապարիկների քանդակներ են, որոնցից մեկի մոտ Խաչենիկ վարդապետի արձանագրությունն է։

Գ. Եկեղեցի, փոքր, գտնվում է բլրի ստորոտում, դեպի Նորաշենիկ գյուղը տանող ճանապարհի եզրին. նախորդների նման շինված է անտաշ քարերով և նույնպես գեղեցիկ ձևավորված մուտք ունի, որի շրջանակներից դուրս, երկու քարերի վրա պատկերված են սիրամարգեր, արևմտյան պատի վրա վարդապետ Շահենի արձանագրությունն է՝ առանձին քարի վրա։

Դ. Որմնափակ խաչքարեր. երեք հատ, բոլորն էլ խիստ վնասված և կիսավեր, գտնվում են բլրի ստորոտից մինչև գագաթը տանող ճանապարհի եզրերին։ Դրանցից երկուսի ճակատներին գրված են չորսական և մեկին՝ երկուական խաչքարեր, բոլորն էլ գեղաքանդակ և բարձրարվեստ, դժբախտաբար հողմահարված և վնասված։ Խաչքարերը շրջապատող որմերի երեսպատման սրբատաշ քարերը թափված-կորած են, մնում են կրաշաղախ լիցքերը, նույնը և ճակատների մասում։

Այս հուշարձանների մասին Մ. Բարխուդարյանցից սկսած գրականության մեջ է մտել երկու սխալ կարծիք. Ա. Որ իբր դրանք բացօթյա բեմեր են։ Բ. Որ, ինչպես եկեղեցիներում,

այնպես էլ այս բեմերի մոտ կարգված են եղել հատուկ վանականներ, որոնց պաշտոնն է մշտապես աղոթել դրանց մեջ թաղված Աղվանից թագավորազների և իշխանազների հոգու հանգստյան համար[1]։ Իրականում այդ բեմ կոչվածները նույն որմնափակ խաչքարերն են, մի տարբերությամբ միայն, որ դրանց խաչքարերը փոքր-ինչ խորն են ագուցված։ Դրանց վրա, ինչպես և եկեղեցիների պատերին գրված արձանագրությունները ո՛չ ժամանակով և ո՛չ էլ բովանդակությամբ չեն համապատասխանում Բարխուդարյանցի ենթադրությանը։

Բլրի գագաթի եկեղեցիների շուրջը հնում եղել է մեծ գերեզմանատուն, որի չնչին բեկորներն են մնացել այժմ։

Բոլոր հուշարձանները շինված են նույն բլրի վրա՝ այժմ էլ օգտագործվող քարհանքի շերտավոր-սալանման սպիտակ կրաքարով, որը կոտրելով, իրար վրա են շարել ագլուսի նմանությամբ։ Քանդակազարդ և արձանագրված քարերը ագուցվել են կանգնած դիրքով։

526. Ա. ԵԿԵՂԵՑԻ, փոքր, գտնվում է բլրի գագաթին. արևմտյան մուտքի հյուսիսում, մի քարի վրա հուշկապարիկի քանդակ և արձանագրություն, 8 տող.



ՁԽԱ|ՁԵՆԷԿ| ՎԱՐԴ|ՊԵՏ| ՍԲ. ԷԿԵՂ|ԵՑՈՑՍ Ց|ԱՂԱՒ-
ԹՍ ՑԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՍ.

Ծանոթ. Վարդպետ=ճարտարապետ, կառուցող և ոչ վարդապետ, ինչպես համարել են հրատարակիչները։

Հրատ. Բարխուդարեանց, 125։ Լալաեան, II, 48։
Լուսանկ. 100.

527. Բ. ԵԿԵՂԵՑԻ, փոքր, գտնվում է բլրի ստորոտում, ճանապարհի եզրին՝ արևմտյան մուտքի հյուսիսում, արտաքուստ, մի քարի վրա 4 տող.



ՁՇԱՀԵՆ Վ|ԱՐԴԱՊԵՏ| ԵԿԵՂԵՑՈՑՍ ՑԻ|ՇԵՑԷՔ Ի ՏՐ:

Ծանոթ. Շահենին համարում ենք եկեղեցու ճարտարապետը, հետևաբար վարդպետ և ոչ վարդապետ:

Հրատարակիչներն արձանագրության առաջին տառը, որ անվան նախդիրն է, անջատել և սխալմամբ Զ-են վերծանել՝ այն համարելով թվական։

Հրատ. Բարխուդարեանց, 125։ Լալաեան, II, 48։
Լուսանկ. 101.

528. Գ. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքից վեր, արտաքուստ, 5 տող.

. . . . .	ՀՆ·ԱԵՒԵՂ· ·	ԻՄՎԱՐՀԱՄ· . . . . .
. . . . .	ՈՒՆԱՓԱՇԻՆ	ԵՑԱՓԶԵԿԵՂԵՑԻՍԲԱԶՈՒՄ
..ՇԽԱՄ· . . .	ՅԵՊԻՍԿՈՊՊ Ո	ՍՈՒԹԵՄՐՅՈՀԱՆԻՍԻԵՒՄՐ
ՆԵՐՍԻՍԻՅ· ·	ՄԱԿՀՈԳՈՑԱՑ	ԵՒԾՆՈՂԱՑՄԵՐՈՑ . . . .
. . . . ԿԱՐԴԷ	· ԱՂԱՒԹՍՅԻ ·	ԷՓԶԱՇԽԱՄՈՂՓԵԿԵՂԵՑՈՅՍ

. . . . ԲԱՂՀԱՆՆ. ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՄ ՎԱՐՀԱՄ· . . . ՈՒՆԱՓԱ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԲԱԶՈՒՄ| ԱՇԽԱՏՈՒԹԲ. ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵ ՏՐ. ՑՈՀԱՆԻՍԻ ԵՒ

[1] Բարխուդարեանց, *Արցախ*, 125, Լալաեան, *Աղդ. հանդ.*, II, 48։ Հ. Հ. Ոսկեան, *Արցախի վանքերը*, Վիեննա, 1953, էջ 35։

ՏՐ.| ՆԵՐՍԻՍԻ. ՑՐԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՑԱՑ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ . . . ՐՈՐՔ ԿԱՐԴԷՐՔ ՑԱՂԱԻԹՍ ՑԻՐԵԼՔ ԶԱՇԽԱՏՈՂՔ ԵԿԵՂԵՑՈՑՍ:

Մանոթ. Հովհաննես և Ներսես եղբայրներից առաջինի մասին այլ արձանագրությունների մեջ տեղեկություններ կան 1195—1235 թթ., իսկ երկրորդի՝ 1235—1260 թթ. երկու եղբայրներն էլ եղել են Աղվանից կաթողիկոսներ։

Հրատ. Բարխուդարեանց, 125։ Լալաեան, II, 48։

529. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, բոլոր կողմերից որմերը քայքայված և թափված. դրանք եղել են անտաշ քարերով շինված. կենտրոնում մնում են երկու խաչքարերը, որոնց ղլխի վեց քարերի վրա եղել է ընդարձակ արձանագրություն. այժմ չորս քարերն են մնում, որոնցից մեկի արձանագրությունը բոլորովին չի կարդացվում, 9 տող.

. . . . . .
. . . . ՈՍՈՒԹԵ . . . ԸՍՅ
ԷՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱ . .
. . . . ՅԻԱՎՄԵՐԵՂԲԱՐՑՍ
. . . . ՎԱՐԴԱ ԱՅԱՐԿԱԹ
. . . . ՊԱՄԻԿ ՅՈՐԴԵԱՑՍ
. . . . . ԵԶԵՒ
. . . . . ՆԱԶ
. . . . . Ծ

ՐԹՎԻՆ:ՁԺԹ: (1270) Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵ. ՐՏՐ. ԸՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՑԷՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ| ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻ ԱՍՏՈՒԾՈՎ ՄԵՐ ԵՂԲԱՐՑՍ| . . . ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԿԱԹ| . . . . ԱՄԻԿ . . . ՑՈՐԴԵԱՑՍ . . . ԵԶԵՒ Ի ՐՎՆԱԶ|Ծ:.

Մանոթ. Բարխուդարյանցի ժամանակ թեև վնասված, բայց ավելի ամբողջական է եղել. թվականի տողը և այլ մասեր, որոնք համարել ենք ճշտված, լրացնում ենք նրանից՝ մանր տառերով։

Հրատ. Բարխուդարեանց, 126։
Լուսանկ. 102.

530. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, մեծ. որմերը եղել են անտաշ քարերից. տեղում կանգուն են իրար կից հինգ սրբատաշ խաչքարեր, որոնց վրա եղել է ընդարձակ արձանագրություն, մնացորդները պահպանվել են երկրորդի և հինգերորդի վրա.

. . . . .	. . . . .	. . . . .	. . . . .
ԻԻՐՈՍԻ	. . . . .	. . . . .	. . . . .
ՈՎԱՅՐԵՑՆ	. . . . .	. . . . .	ԱՍԻԱՒՓՇԻՆԵ
ԶՍՆՊԱՏՅԻ	. . . . .	. . . . .	ՍՆՊԱՏԱՈ
ԶԳԷԷՐԼԵԼՈՑ	. . . . .	. . . . .	ԹԱՐԱԷՄ
Ի ՄԻՆՆՍՆՊԱՏ	. . . . .	. . . . .	ՍԲԱՂԱԻԹՍ

ԻԻՐՈ . . . . . .
ՈՎԱՑՐԵՑՆ . . . . . ԱՍՎԱԻՓ ՇԻՆԵՐՑԻ.
ԶՍՆՊԱՏ ՑԻ . . . . ՍՆՊԱՏԱ ՈԼԶ ԻՄՈ . . .
ԶԳԷԷՐԼԵԼՈՑ . . . . . ՐՄԽԻԹԱՐԱ ԷՄ . .
Ի ՄԻՆՆ ՍՆՊԱՏ . . . . . ՍԲ ԱՂԱԻԹՍ . . .

Հրատ. Բարխուդարեանց, 126։
Լուսանկ. 103.

531. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, մեծ, որմերի երեսպատման քարերի մեծ մասը թափված, նույնպես և ճակտոնը, որոնք սրբատաշ են։ Ճակատին ագուցված են իրար կողքի չորս խաչքարեր, որոնք այժմ ել մնում են, բարձրարվեստ են, բայց խիստ հողմահարված. դրանց գլխին երկու շարքի ութ քարերի վրա եղել է մեծ արձանագրություն, 6 տողով. նշմարվում են միայն վերջին երկու քարերի արձանագրությունները.

· · · · ՃՆՖՎՐԹ
· · · · ՙ՚՚ ԻԶՆ
· · · · ՍԱԾ
· · ԱՂՄԱՏՍ
· · ԱՆԷԱՓՍ
· · ՀՄԵՐՍՈՒ
· · · ՀԱՀԵ

Ծանոթ. *Այս վիճակում է եղել նաև Բարխուդարյանցի ժամանակ։*

Հրատ. *Բարխուդարեանց, 125։*
Լուսանկ. *104.*

532. ՆԱԽՈՐԴ ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱՉՔԱՐԻ *հյուսիսային որմի ստորին մասում, 7 տող.*

ԵՍԽԱՀԻՆԵ
ԿԱՆԵՑԻՎԱՐ
ԴՊԵՏՄԲՆՀ
ՆԻՍՈՐԴԻՎԱՐ
ԿԱՍԱՐՓԿԱՐ
ԴԷՓ.ՅԱՂԱՒԹ
ՍՅԻՀԵՑԷՓԻՓՍ

ԵՍ ԽԱՉԻՆԵ|Կ ԱՆԵՑԻ ՎԱՐ|ԴՊԵՏ ՍԲ. ՆՇ|ԱՆԻՍ, ՍՈՐԴԻ ՎԱՐՀԱՄԱ. ՈՐՔ ԿԱՐ|ԴԷՔ ՅԱՂԱԻԹ|Ս ՅԻ-ՇԵՑԷՔ Ի ՔՍ։

Ծանոթ. *Վարդպետ=ճարտարապետ։ Հրատարակիչը չհասկանալով այդ և սխալ վերծանելով առաջին երկու տողերը, միանգամայն այլ իմաստ է տվել արձանագրությանը։*

Հրատ. *Բարխուդարեանց, 126։*
Լուսանկ. *105.*

533. ԽԱՉՔԱՐ, *ագուցված է Բ. եկեղեցու հյուսիսային պատին, ներքուստ. ձախ մասում* $^1/_3$*-ով կտրված և ճակատի մասը ջարդված խաչի ձախ կողմում միայն անորոշ տառեր, իսկ աջում՝ 12 տող.*

Ո | ԳԵՐԳՈՒ
| ՈՒՓԱՆ
| ՀԱՅՐԻԿԱՅՐ.
ԻԲ | ՈՐԴԻՔՍԿԱՆ
Տ | ԳԵՐԶՍԲ
ԲՄ | ԽԱՀԱԾ
| ՆՈՂ.
| ՅՄՐ
| ՈՅՈ.
| ԿԱՐ
| ԴԱ.
| ԱՂ

ԳԵՐԴ ՈՒ |ՈՒՓԱՆ| ՀԱՅՐԻԿԱՅՐ| ՈՐԴԻՔՍ ԿԱՆ|-ԳԵՑԱՔ ԶՍԲ. |ԽԱՀԱՍ Ծ|ՆՈՂ|ԱՅ|Ց ՄԱԵՐ|ՈՅ. ՈՐՔ| ԿԱՐ|ԴԱՐՑՔ| ՐՅ|ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ։

534. Ա. ԵԿԵՂԵՑՈՒ *ներսում ընկած մի քարի վրա եղել է.*

Թվին։ ԶԺԹ։ (1270) · · ի տէրութեան · · sr. Սահմանոսի, յեպիսկոպոսութեան sr Ներսիսի. ես Մխիթար որդի խ · · · կանգնեցի զխաչս։

Հրատ. *Բարխուդարեանց, 126։ Լալաեան, II, 47։*

535. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվել է Ա. եկեղեցու ներսում.

Այս է տապան Տ՝. Յոհանիսին, որդի Տ՝. կարապետին. թվիլ։ Ռմխէ: (1798):

Հրատ. Լալաեան, II,, 47։

536. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվել է Բ. եկեղեցու մեջ.

Այս է տապան Խմիբի որդուն Սարգիսին. էն ժամանակն որ Պապա Ուշաղին թվիլ։ :ՌՃՀԴ: (1725). որ եկն. ես Թապուդի առաջէ տուսդ իլի. այանին ճդովն սպանեցէն, հերքեցանցս Աթային. Հերփէիս։

Հրատ. Բարխուդարեանց, 127։

46. ՂԶՂԱԼԱ ԳՅՈՒՂ

Այս գյուղում և շրջակայքում գտնվող միջնադարյան հուշարձանները XVII դարից ավելի հին չեն. արձանագրություններ ունեցողները հետևյալներն են.

Ա. Մեծ նահատակ, մատուռ, գտնվում է գյուղից հյուսիս, ձորի մյուս կողմում, բարձր սարի գագաթին, շրված է կիսամշակ քարերով. մատուռի մեջ է անտապանագիր մի գերեզմանաքար. պատերին կան արձանագրություններ։

Բ. Ս. Աստվածածին, եկեղեցի, գտնվում է գյուղի մեջ, թաղակապ շինք է, կիսամշակ քարերով շինված։

537. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, արևմտյան պատի մեջ ագուցված մի քարի վրա, արտաքուստ, 4 տող.

ԵՍՂԶՂԱԼԵՅԻՂԱՐԱՅԻԱՆՍՂԻՆԵՅԻԵԿԵՂԵՅԻՍՀԱՅՐՆ
ԻՄԱՄԻՐԻԱՆԵԻՄԱՅՐՆԻՄՄԱՐԻԱՄՆԵԻԵՂԲԱՅՐՆԻՄՍԱՐՈՒ
ԽԱՆՊԱՂԻԲԱԲԱՍԻԵԻԿՈՂԱՅԳԻՅՆԻՄՓԵՐԻՆ ԵԻ ՈՐԴԻՆԻՄ
ՍԱՐՔԻՍԹ-ԻՆ ՌՃԻԵԷՐ

ԵՍ ՂԶՂԱԼԵՅԻ ՂԱՐԱՅԽԱՆՍ ՇԻՆԵՅԻ ԵԿԵՂԵՅԻՍ. ՀԱՅՐՆ| ԻՄ ԱՄԻՐԽԱՆ ԵԻ ՄԱՅՐՆ ԻՄ ՄԱՐԱՍՆ ԵԻ ԵՂԲԱՅՐՆ ԻՄ ՍԱՐՈՒ|ԽԱՆ, ՊԱՂԻ, ԲԱԲԱՍԻ ԵԻ ԿՈՂԱՅԳԻՅՆ ԻՄ ՓԵՐԻՆ ԵԻ ՈՐԴԻՆ ԻՄ| ՍԱՐՔԻՍ. ԹԻԻՆ :ՌՃԻԵ: ԷՐ (1676):

538. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, արևմտյան մուտքի բարավորի վրա, 8 տող.

ԵՍ ՂԶՂԷԼԷՅԻ
ԱՄԻՐԽԱՆԷՆ
ՏՂՂ ՂԱՐԱՅԽԱ
ՆՍ ԵԿԻ ՈՒԽՏՍԻ
ՄՆԱՅԱ ՏԱԿԻՍՅ
ԻՂԱՏԱԿԻ ԻՄ ԵԿԵՂ
ԵՅԻՍ ԿՈՂԱԿԻՅ ԻՄ
ՓԵՐՈՒՆ ԱՄԷՆ

ԵՍ ՂԶՂԷԼԷՅԻ| ԱՄԻՐԽԱՆԷՆ| ՏՂԼԱՅՅ ՂԱՐԱՅԽԱ|ՆՍ ԵԿԻ ՈՒԽՏՍ ԻՄ ՆԱՅԱՏԱԿԻՍ. ՅԻ|ՇԱՏԱԿԻ ԻՄ ԵԿԵՂ|ԵՅԻՍ. ԿՈՂԱԿԻՅ ԻՄ| ՓԵՐՈՒՆ. ԱՄԷՆ.

Ծանոթ. *Ժամանակով մոտ է նախորդին։*

539. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, հյուսիսային պատի մեջ ագուցված փոքր խաչքարի վրա. ներքուստ, 4 տող.

Խ Ա ՀՍ
Ս ԱՆ Դ
ՈՒ ԽՏ
ԱՅՆ ԽՍԱ

ԽԱՀՍ| ՍԱՆԴ|ՈՒԽՏ|ԱՅՆ. ԽՍԱ · · ·